Հավելված 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
<< 21 >> փետրվարի 2018թ. թիվ 70 որոշմամբ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Հանրապետության ոստիկանության վետերանների և աշխատակիցների աջակցության <<Վահան>> բարեգործական հիմնադրամի 2018թ. գործունեության

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության վետերանների, աշխատակիցների, զոհված մահացած աշխատակիցների ընտանիքների, հաշմանդամ դարձած աշխատակիցների և նրանց ընտանիքների սոցիալական ներկա վիճակը

Ոստիկանության վետերանների, աշխատակիցների, զոհված մահացած աշխատակիցների ընտանիքների, հաշմանդամ դարձած աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների (այսուհետ՝ հիմնադրամի շահառու) սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ առ այսօր լուծվել և շարունակվում են լուծվել մի շարք կարևորագույն հիմնախնդիրներ:

Այնուհանդերձ, դեռևս զգալի է հիմնադրամի շահառու հանդիսացող և սոցիալական աջակցության կարիք ունեղոցների թիվը:

Ոստիկանության կենսաթոշակառուների թիվը, 2018 թվականի տարեսկզբի դրությամբ կազմում է 8572 մարդ, որից երկարամյա ծառայության կենսաթոշակ ստացողները՝ 7925 մարդ, հաշմանդամության կենսաթոշակ ստացողները՝ 365 մարդ, կերակրողին կորցնելու համար կենսաթոշակ ստացողները՝ 291 մարդ: Հայրենական մեծ պատերազմի մասնակից են՝ 7-ը, Հայաստանի և ԼՂՀ սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակից՝ 1857-ը, այլ երկրներում պատերազմական գործողությունների մասնակից՝ 66-ը: 1082-ը ունեն հաշմանդամության տարբեր կարգեր:

Հատկանշական է, որ գերակշիռ մասի եկամտի միակ աղբյուրը կենսաթոշակն է և նրանք ունեն նյութական ու բարոյական աջակցության կարիք:

Տարվա ընթացքում նրանցից շատերն են դիմում տարբեր ատյաններ, և հիմնականում ՀՀ ոստիկանությանը՝ ակնկալելով հնարավոր ֆինանսական օգնություն և աջակցություն: Այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից ոստիկանությանը յուրաքանչյուր տարի կատարվող խիստ սահմանափակ հատկացումներն ամենևին բավարար չեն նվազագույն կարիքները բավարարելու համար:

Ոստիկանության ծառայության մեջ գտնվող և նախկին զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների սոցիալական աջակցության այլընտրանքային հնարավորություններ ստեղծելու նպատակով դեռևս 2001 թվականին ՀՀ ոստիկանության վետերանների նախաձեռնող խմբի կողմից հիմնադրվել է

Հանրապետության ոստիկանության վետերանների և աշխատակիցների աջակցության <<Վահան>> բարեգործական հիմնադրամը:

2. Հիմնադրամի շահառուները

Հիմնադրամի շահառուներն են՝

1. Ոստիկանության աշխատակիցները, վետերանները և նրանց ընտանիքների անդամները,
2. Զոհված, մահացած աշխատակիցների ընտանիքների անդամները,
3. Հաշմանդամ դարձած և նյութական աջակցության կարիք ունեցող ոստիկանության աշխատակիցները և կենսաթոշակառուները,
4. Պատերազմի և աշխատանքի ոստիկանության կենսաթոշակառուները (վետերանները),
5. Մահացած կենսաթոշակառուների սոցիալապես անապահով ընտանիքների անդամները,
6. Հայաստանի Հանրապետությունը (ոստիկանությունը):

3. Ծրագրի նպատակները

Հանրապետության ոստիկանության վետերանների և աշխատակիցների աջակցության <<Վահան>> բարեգործական հիմնադրամի 2018 թվականի գործունեության ծրագրի նպատակն է հնարավորինս բարելավել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պատերազմի և աշխատանքի վետերանների, աշխատակիցների, զոհված, մահացած կամ հաշմանդամ դարձած աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական վիճակը:

Ծրագիրը մասնավորապես ներառում է.

ՀՀ ոստիկանության պատերազմի և աշխատանքի վետերանների (կենսաթոշակառուների), աշխատակիցների, ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված, մահացած կամ հաշմանդամ դարձած աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների՝

- բուժման և հանգստի կազմակերպումը,
- սոցիալական վիճակի բարելավումը,
- անհրաժեշտ դեղորայքի և բուժական այլ միջոցների ձեռքբերումը:

Ծրագրավորված գործողությունների լիարժեք իրականացումը կնպաստի նաև հանցավորության դեմ պայքարի արդյունավետության, կատարողական և աշխատանքային կարգապահության, համակարգի հեղինակության բարձրացմանը և օրինականության ամրապնդմանը:

Քանի որ Հիմնադրամի կանոնադրության համաձայն Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության, հանդիսանում է Հիմնադրամի շահառու, ուստի ծրագրով նախատեսվում է նաև աջակցություն ՀՀ ոստիկանության գործունեության հետևյալ ոլորտներում՝ ՀՀ ոստիկանության պաշտոնական,

մշակութային և տոնական միջոցառումների կազմակերպում, ՀՀ ոստիկանության բուժ.հիմնարկների տեխնիկական վերազինում, դեղորայքով ապահովում և բուժ.անձնակազմի աշխատանքներին աջակցում:

4. Ծրագրի կատարման ժամկետներն ու կարգը

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018 թվականին, իսկ ֆինանսական հատկացումները նախատեսվում է բաշխել հետևյալ ուղղություններով.

հ/հ	Շահառուները, միջոցառումները	Գումարը (հազ.դրամ)
1	Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված շահառուներին՝ ՀՀ ոստիկանության պատերազմի և աշխատանքի վետերաններին (կենսաթոշակառուներին), աշխատակիցներին, ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված, մահացած կամ հաշմանդամ դարձած աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամներին ֆինանսական օգնություն, ՀՀ ոստիկանության պաշտոնական, մշակութային, տոնական միջոցառումների կազմակերպման, անցկացման ֆինանսական աջակցություն	138.400,0
2	Հիմնադրամի վարչակառավարչական ծախսեր	10.600,0

5. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն ու չափերը

Հիմնադրամի 2018 թվականի բյուջեն, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2018 թվականին նախատեսվում է ձևավորել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով՝ ՀՀ ոստիկանության արտաբյուջետային միջոցներից կատարվող մասհանումների հաշվին:

6. Ծրագիրն իրականացնող մարմինը

Սույն ծրագիրն իրականացնող մարմինը հանդիսանում է Հանրապետության ոստիկանության վետերանների և աշխատակիցների աջակցության <<Վահան>>

բարեգործական հիմնադրամը, որը գտնվում է ք.Երևան, Նալբանդյան 130 հասցեում, հեռ. +374 10 54-18-53, +374 10 54-18-55, ինտերնետային կայք՝ www.vahan.info.am, էլեկտրոնային փոստ՝ vahanbaregorts@gmail.com: Գրանցման թիվ 27316003162, վկայականի թիվ՝ 03Ա 053643: Հիմնադրամին, որպես հարկ վճարողի, տրվել է հաշվառման 00065035 համարը:

Հիմնադրամի գործունեության ծրագիրը ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 08.08.2003թ. թիվ Մ-285-Ա որոշմամբ որակվել է որպես բարեգործական:

Հիմնադրամին տնօրենն է ՀՀ ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Գրիգորի Աբովյանը:

Ծրագիրն անմիջականորեն իրականացնող և ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունները որոշող մարմինը հանդիսանում է Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, որի նախագահը, կանոնադրությամբ սահմանված կարգով, ի պաշտոնե, հանդիսանում է ՀՀ ոստիկանության պետը:

Տնօրեն՝ *Գ.Աբովյան*

«ՎԱՀԱՆ»
"ВАГАН"
00065035